

# ՍԻՐԱ, ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

Ա. ՏԱՐԻ - ՆԱՐ ՇՐՋԱՆ

1927 - ՓԵՏՐՈՒԱՐ

Թիվ 2

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՀԱՅ ԵԽ ՀԱՅԱՑԻ ՏՕՆԵՐՈՒ ԱՄԻՍԸ

Փետրվար ամիսը Հայաստանեայց Եկեղեցւոյ համար՝ նշանաւոր սօնեարու շարք մը կը ներկայացնէ՝ ամանորի առաջին և մէակ նշանաւոր Տօնէն, Մընունդէն ետքը։

Այս ամիսի (Նոր Տամարով) Փետր. 5. Եր. Լուսաւորչի Տան սրբասուն և սրբացած գէմքերը կը ամսափառուին, Փետր. 7-11, Առաջաւորաց շարաթապահնքն է, իսկ Եր. Ս. Արդղ/ս. Առաջաւորաց պահնքին հաստատութիւնը կազուած է լուսաւորչի առաքելական զործանելութեան յիշատակին, իրուն պատրաստութեան շրջան մը նոր և առողջ հոգեոր կեանքի մը։

Փետր. 12. Եր. Ս. Արդղիսի, Կապաղովիկոյ բանակին խելացի, քոջ հրամանատարին տօնն է, որ 362/3 ին նահատակուեցաւ Պարսկաստանի մէջ, իր զակին Մարտափրոսի հետ Ս. Արդղին տօնը հին է Հայց. Եկեղեցւոյ մէջ։ Ս. Մեսրոպին կը վերտաղուի անոր մասունքին փոխագրութիւնը Մազանդարանէն կարքի մօս Խշի գիւղը, եւ հոն վանքի մը հաստատութիւնը, ինչպէս նաև Վրաստանի մէջ, Դադ լեռան վանքին շինութիւնը Ս. Արդղի անունով։ Ս. Արդղի անունով, Ս. Արդղիս Հայ ժողովրդին սիրելի սուրբն է. Հայոց աղջիկներ Առաջաւորաց պահքը (ժողովրդի լեզուին մէջ Ս. Արդղի պահնք) բացարձակ ծոմով կ'անցընէին։ Փետր. 14. Յիսուս մանուկի քառասորեայ Տաճար ընծայման անշարժ տօնն է. Հայոց Տեղինաւը եւ Մերելը, տօնական լեզուի մէջ Տեղունիդառաջը. Հատացեալներուն իրենց օրօրուցէն Աստուծոյ նույիրուելուն խորհրդաւոր տօնն է Տեղանընդառաջ, որ մեծ հանդէսով կը կատարուի Հայց. Եկեղեցւոյ մէջ՝ լծորդուած ըլլալով նաև Հայ հեթանոսութենէն չնշտած տօնի մը օրուան, որմէ հաւանաբար մեացած է հրավառութիւնը և անոր կից աւանդ ական խրախնանքը՝ երիտասարդներուն՝ խարոյին շուրջը։ Փետր. 15 ին Առովմեան Զօրավարք, և այս ամիս ունեց տօնակից Սուրբատանք, Առովմեանք երկու խումբ են, մէկ կը Առովմէ Քնունիի գլխաւորութեամբ, Վարդանանց պատերազմէն երկու տարի յառաջ, Յաղիկերա Բ. ի համանով նահատակներ. իսկ երկրորդ խումբը, Հայաստանի վրայ արար աիրապետութեան ատեն, Առովմ Անձեւացիի գլխաւորութեամբ 150 հոդինոց քաջահատաներու խումբ մը, որք նահատակուեցան 853 ին, Հայաստանի և Հաւատքի համար։ Երկու տօներ զատ զատ կը խմբուէին յառաջ, յետոյ ի մի ձուլուած և Առովմեան Զօրավարք անուան տակ սկսած են տօնա-

խմբուիլ։ Սույնիասանի Ալանաց աշխարհէն, իսկ Անկեանի՝ Հռոմոց, պարատականներ են երկու խումբերն ալ, որք Հայաստան կուգան պաշտօնով, Թադէսո Առաքեալի քարոզութեան առեն, կը ներշնչուին Հայոց Առաքեալէն, կը մը կրտուին, եւ յետոյ կը նահատակուին։ Սերտիւ կապուած է ասոնց նահատակութեան պատմութիւնը Հայաստանի հետ։ Առկեանց տօնը Փետր. 17. եշ.՝ Փետր. 19. նը. Ա. Սահակի տօնն է առանձին։ Ա. Սահակ Հայրապետին յիշատակը Երկիցս կը տօնախմբուի Հայց։ Եկեղեցւոյ մէջ։ Նախ այսպէս տօնաձինն Փետրվարի մէջ, յետոյ Ա. Մեսրոպի հետ, ամսուը, Փետր. 22. Գէւ և նոյնդեանց Քահանայից տօնն է։ Վարդանանց մէջ Հայ եկեղեցականութիւնը ներկայացնող խումբն է ասիկա, որոնք մահուան գատապարտուեցան Հայրենիքի և Հաւատքի սիրուն։ Փետր. 24, եշ., տօն Վարդանանց Զօրավարաց։ Վերջապէս մեծպահք, որու առաջին երկու օրերը Փետրվարի վերջին երկու օրերն են այս տարի։


Ինչպէս կը տեսնուի այս խիտ ամփոփումէն Փետրվարը Հայ եւ Հայացի տօներու ամիսն է, որոնց ամէնքն ալ իրենց պատմական արժէքն ու նըշանակութիւնը ունին Հայ ժողովուրդի պատմական կեանքին մէջ։

#### ՍՈՒՐԲԵՐՈՒԽՆ ՆՇԱԱԼԱԿՈՒԹԻՒՆԸ

Դաղափարի, համոզումի և հաւատքի համար նահատակուիլ կամ արիւն թափել ինքնին արժէքը մըն է թանկացին։ Այդ արիւնը « նոյիմ իսկ գործով » մաքրագործումն է նահատակին։ Անոնք բոլոր մեզի պէս մահկանացուներ էին, մեզի պէս կիրքերով ու տկարութիւններով զդացուածներ։ Փրկչին խաչակից աւազակին պէս թերեւս մինչև իրենց նահատակութեան վերջին պահը, մեզբերու մէջ ապրածներ ալ կային անսոնց մէջ, միայն սա տարբերութեամբ որ անոնք իրենց կեանքին ու է պահուն իրենց հաւատքին ճշմարտութեան վկայելու պատրաստ գտնուած են իրենց արեան գնով և կնիքով։ Անոնք աչք առած են մահք, և իրենց բոլոր թերբութիւններուն եւ տկարութիւններուն մէջ ունեցած են հոգեւոր կեանքի պայցառ տեսիլը, եւ իրենց մտքին մէջ ազատ ապրելու իրաւունքին դիտակցութիւնը։ Ասիկա մոլեռանդ, ագէտ, նախուալարեալ հոգիները բարացուցող կուրութիւն մը չէ, այլ համեստ եւ սակայն պայծառառս հոգիներու արտայայտութիւնը, անկեզծ ու պարզ վկայութիւնը Աւետարանի ճշմարտութեան։

Ինչպէս որ հայրենիքի պաշտպանութեան դատին համար պատերազմի ճակատին վրայ ինկայններ այլևս դիւցազն հոգիներ են, այսինքն ազատ հայրենիքի գաղափարին ու իրաւունքին նահատակինները, որոնց անձնական թերբութիւնները և անհատական տկարութիւնները կը մոռցուին, և անսոնց հայրենասիրական առաքինութիւնները կը հոչակտին միայն – որովհետեւ իրօք իրենց արիւնով լըւացուած ու մաքրագործուած են այլևս – նոյնպէս Սուրբերն ալ իրենց հաւատքին ու կրօնքին աղատութեան իրաւունքով, որուն ճշմարտութեանը վըկայած են իրենց արիւնով, այլևս չենք տեսներ, մանաւանդ իրաւունքով տեսնելու անսոնց մարդկային թերբութիւններն ու տկարութիւնները։ Արդէն ի՞նչ բանի մէջ է կեանքին արժէքը։ – Ճշմարտութեան վկայութեան մէջ անշուշ։

138-98



Եւ հո՞ս է արդէն Սուրբերուն ալ նշանակութիւնը, որոնք չեն սիրած բռնաբարուած կեանքի մը սուսմիւնները, և չեն հանգուրժած իրենց հոգին շուրջ դժուած կաշկանդումներուն, և սիրով, չերմեռանդ զիասակցութեամբ զոհած են իրենց մարմինը ու արինը Փրկչին համար, որ իր կարգին մեռած էր Խաչի մահալ իրրե փրկանք իրենց ազատագրութեան։

Սուրբերու կեանքին մէջ զարմանալի երեսյմներ կան։ Ստուդիւ անոնք ունին մարդկային տիկարութիւններ, բայց դազափարի և հուատքի իրաւկանութենէն կ'ոգերուաւին միշտ։

Ս. Սարգիսի կենսագիրը զիաել կուտայ թէ այս Սուրբը իր բովանդակակի կեանքին մէջ ոչ միայն սրտանց կը սիրեց զմասուած, այլ նաև կը սիրուեց անիկ։ Այս հաւասառումը կարելի է ընել բոլոր Սուրբերուն համար, որոնց շարքը կը ներկայացնէ կարսպութիւններու, մտայնութեանց, զիրքի, աստիճանի, հարստութեան կամ աղքատութեան այլազանութիւն մը։

Սուրբերու այս հոյակապ բազմութիւնը դարձնական ապացոյցն է Աւետարանի ծշմարտութեան, և այս է պատճառը որ անոնց յիշատակը առարկայ եղած է քրիստոնէական եկեղեցւոյ մասնաւոր դուրդուրանքին ու յարդանքին և առիթ մը՝ պաշտամունքներու հանդիսաւորութեան և ողեղութեան։ Սուրբեր անմահ վկաներն են Աւետարանի դազափարին ու յազդանակին։ Հաւատացեալներու համար կենդանի գասեր ու օրինակներ են անոնք։

### ՀԱՅԱԶԴԱՅԻՆ ՍՈՒՐԲԵՐ

Տարակոյս չկայ որ Հայ ժողովուրդի համար պանծալի իրողութիւն մըն է գոյութիւնը ի՞ր ծոցէն ընարուած Սուրբերու բազմութեան։ Հայոց ազգային պատմութիւնը՝ կուիններու, պատերազմներու, իրաւանքներու պաշտպանութեան պատմութիւն մըն է թէ իր նախաբրիստոնէական շրջանին և թէ քրիստոնէութեան բոլոր ժամանակներուն մէջ . . . մինչև յայսօր։ Պարծանքին ստուգութիւնը կը շեշտուի անոր համար մանաւանդ որ Հայ ժողովուրդը իր ազգային դոյութեան կուիսին հաւասար նկատած է գաղափարի ու հաւատքի կռիւը. որիշ խօսքով՝ նոյնացուցած է Ազգային և կրօնական Հաւատքը։ Մեր մէջ Վրիմանէս կաթողիկոսն է (333—341) որ առաջին անդամ նու իրագործած է աղդային դազափարի և իրաւանքի անունով եղած նահասակութիւնը, որրացներով և անմահացնելով հայրենիքի սիրուն մեռնողներուն յիշատակը եկեղեցւոյ մէջ տարեկան տօնախմբութիւնով։ Այս կարգ աղքութեամբ առաջին աղդային Սուրբը եղաւ Մամիկոնեան Վաչէ Զօրավար։ Աւազ սակայն, որ Զօրավար Վաչէի յիշատակը դադրած է, հաւանաբար ոչ-լուրջ պատճառով մը։

### Դ Ե Կ Ա Ռ Գ Ե Ա Ն Ք

Ազգային Սուրբերու առաջին զիմին վրայ ևն Ղեւոնդեանի եւ Վարդանանի Ղեւոնդեանք կը խորհրդաւորեն Հայոց։ Եկեղեցւոյ բահանայութեան անձնազոհութիւնը։ Այդ խումբին մէջ կայ կաթողիկոս և եպիսկոպոս։ Բայց ոչ Յովսէփեանի կոչուած ևն Վարդանանց պատերազմին հեղինակները ի պատիւ Յովսէփի կաթողիկոսին, ոչ ալ Սահակինի՝ Խշոռնեաց եպս։ Քաջախոս և Քա-

ջափորձ Սուրբն Սահակի անունով, այլ կոչուած են Գևոնիկեանի, ի պատիւ Վաշնանդեցին, որ բուն պատճառը նկատու եցաւ Վարդանանց ասլատամբութեան, Տիղոսնի արքայական դատարանին մէջ :

Հայաստանեայց Եկեղեցւոյ քահանայութիւնը իրաւունք ունի երր Գևոնիկեանց Տօնը կը նկատէ իր տօնը և խրախճանքներ կը կատարէ այդ օր :

Բայց մեր Քահանայ Հայոցն եթէ ոգեսրուին Սուրբն Գևոնիկեանքն՝ և ամէն օր, և ո՛չ մէ անոր տօնական յիշատակին միայն՝ օր մը տարուան մէջ, Գևոնիկեանց Տօնը եւ իրեն նահատակակիցները աւելի ևս հասկցուած պիտի ըլւան և զնահատուած : Սուրբն Մեսրոպ շաա կանուխէն դիտեց պատանի Գևոնիկին լուսափառ կուրծք քուշակեց անոր նահատակութիւնը : Գևոնիկ, հիւանդու, տկար մարմին մը քաշքէց մինչեւ իր նահատակութեան պահը, երբ այլիս ալեփառ ծերունի մը, և օր մը չդաւեց իր կոչումին ևս պարտականութեան : Առողջ միտ առողջ մարմնի մէջ, կ'ըսէ առածը . Գևոնիկ զրչնց զայն իր կեանքին օրինակով : վասն զի անառողջ մարմնի մը մէջ մեծցուց առողջ հոգի մը, որ կաթողիկոսներէն ու եպիսկոպոսներէն աւելի նախանձելի ըրաւ իր անունն ու դործը Հայց, Եկեղեցւոյ պատմութեան մէջ :

Հայ ժողովուրդի այս համազգային նահատակութեան երկարաձիգ շրջանին մէջ Եկեղեցին պէտք ունի Սուրբն Գևոնիկի ոգիին . մաքուր, արի, աղանիւ, նուիրեալ, գրաւիչ եւ շինիչ ողի մը, օր իր սնունդն ու ոյժը կը դանէ անվերապահ ու անշահախնդիր ծառայութեան մէջ, որ միիթարաւթիւնն է ժողովուրդին, և ներքին ոյժն ու զօրութիւնը Եկեղեցւոյն :

#### Պ. Ա. Բ Դ. Ա. Ա. Ա. Բ:

Վարդանանց Տօնը Հայց, Եկեղեցւոյ մէջ իր արդի շքեզութիւնը կը պարտի մեր Շնորհալի Ս. Հայրապետին (1166-1173), որու անմահ զրչէն ճառուագութեցին Նորանրան ու Արխացիալը : Քաջն Վարդանի իր քրիստոնիայ մարդու հաւատքին և իր զինուորի քաջութեան փաստով խորունկ թափանցեց Հայ ժողովուրդին մէջ : Հայաստանի շատ մը Եկեղեցիները նուիրուած են Ս. Վարդանի անուան, նոյն իսկ Եկեղեցի մըն ալ է . Պոլսի մէջ : Քաջն Վարդանի նըշանակութիւնը հետզհետէ մատչելի եղաւ Հայ դպրոցներու, այնաէս օր Վարդանանց Զինզարբին Եղաւ դպրոցական տօնախմբութեան օր մը : Եւ այսօդ Վարդանանց գործին զնահատումը հասած է այնպիսի հանդրուանի մը, որ այլ ևս ան լոկ Եկեղեցւոյ մէջ տօնիկի Սուրբ մը չէ, այլ բոլոր Հայութիւնը խանագալառուոր մը, որ ո՛չ միայն ախոզար Հայ մըն է իր քրիստոնէական դաստիարակութեամբ ու հաւատքով, այլ նաև իրքեւ զինուոր օժառուած է առապետական ամէնէն աղնիւ ողիով : Քաջն Վարդան, Աւարայրի պատերազմէն յառաջ, քառասուն երկու պատերազմներ մզած էր, բոլորն ալ ի հաշիւ Պարսիկ պետութեան, և քառասուն երկուքն ալ յաղթական ելնելու պայմանաւու : Վարդան դիւրահաւան և դիւրագրգիռ զինուոր մը չէր : Երբ Ազգին և Աւետարանին հաւատարիմ կուսակցութիւնը տուաւ պատերազմի վճիռը, իր յոյսը դրաւ Սպարապետ Վարդանի վրայ, որ սակայն մերժեց այդպիսի պատասխանատուութիւն մը ստանձնել, բացէիրաց յայտարարելով թէ Հայ զօրքը չի կրնար չափուիլ Պարսից

ահազին ոյժին հետ . մանաւանդ ես վատահութիւն չտնիմ, գիտել տուաւ , նախարարութեանց վրայ, որոնք նեղ պահերուն դասալիք կ'ըլլան և մինակ կը թողան իրենց Սպարապետը իր սեփական դանդին հետ : Ասիկա յայտարարութիւնն եր քաջ և փո՞րձ Սպարապետի մը և շիտակ խօսքը պատուախնդիր Հայութ մը , և Վարդան ցոյց տալու համար թէ ինքն պարզ պարսաւանք մը չէ որ կ'ընէ և ո՛չ ալ կ'ուզէ չնչել տալ տրուած վճիռը պատերազմի մասին , ճամբայ ելաւ՝ յունարատին Հայտառան անցնելու համար Յուզուեցաւ Ազգը , և պատկառելի պատգամասութիւն մը զրկեց Սպարապետին ետեէն , Դեսնդ Երեցի առաջնորդութեամբ և այլեւայլ պաշտօնադիրներով , որոնց տակ Հայտառանի մարդկան Վասակին ալ կնիքն ու ստորագրութիւնը կար , և ասուածային ու մարդկային երգումներով հաւանեցուցին Հայոց Սպարապետը , որ վերադառնայ եւ անցնի բանակին ղլուխը : Վարդան վերադառնաւ . որովհետեւ եղած պատուի խօսքերը և երգումները շատ նուիրական էին իրեն համար , թէեւ իր կասկածները փարատած չեն բոլորովին : Քանի Վարդան պահեց և պատուեց իր առապետական խօսքը , և վերջապէս մղուեցաւ Աւարայրի պատերազմը հՅԱ-ին :

Մշացածը ամէն Հայ գիտէ :

Թէեւ պատմիչը , եղիշէ , կը հաւառուէ թէ քաջերու գէմ ելան , և երկու կորմն ալ պարասուեցան . բայց մենք , խօնաբհաբար կը խօսսովվանինք թէ Հայք կորմնցուցին պատերազմը՝ հակառակ թշնամիին բազմապատիկ կոռուստին : Վարդանանք սակայն շահեցան պատերազմին նպատակը , եւ ասիկա միայն Քաջն Վարդանի նահաւակութեան շնորհիւ : Եւ այդ նպատակն էր որ վերջապէս իրադորեւեցաւ հՅԱ-ին , Վարդանի Եղրօրորդի Վահան Մամիկոննեանի քաջութեան և խելացիութեան շնորհիւ՝ նուարսակի գաշինքով :

Վարդանանց պատերազմին նշանակութիւնը գնահատելու համար պատմական ստուգութեամբ , պէտք չէ չափազանցել իրողութիւնները . Ազգային Հաւատարին , և Աւետարանի Հաւատարին սրացապահութեան նահաւակիներն են Վարդանակի . ասկէ գուրս և առելի ինչ որ ըստու , շաղակատութիւն է :

Իսկ մեղ համար , որ այսօր ՎՂԵԾ տարիներու անջրապետով մը հեռացած ենք Աւարայրի պատերազմին , կը մնայ զորդուրալ Ազդային Հաւատարին և Աւետարանի Հաւատարին զորդութեան յիշասակին վրայ :

Քաղաքական և կրօնական կետնքի մէջ խզճին անըրունաբարելիութիւնն ու ազատութիւնը Հայ ժողովուրդին իրաւունքն է : Այս է Վարդանանց պատերազմին նշանակութիւնը , այս է պատմութեան դասը , որ մեացած է Աւարայրէն :

Թէեւ Հայ ժողովուրդին մեծագոյն զանգուածը ույսօր զրկուած իր բնաշխարհէն , ցիրուցան եղած է « ի սիմեոս աշխարհ » և վերածուած դադականութիւններու , բայց տակաւին կրնայ իր միութիւնը եւ հաւաքականութեան զալափարը ամուր պահել Վարդանանց ոգիռվ , քանի որ ամէնքն ալ միհենոյն ազգային հաւատարի ժառանգորդներն են և միհենոյն Աւետարանին հաւատացեալները :

Նատ մըսիթարական է անչուչս զիտնալ թէ Վարդանանց այս առպետական ողին , հայրենիքի և կրօնքի պաշտուանութեան մէջ , հետզհետէ յստակորէն կը հասկցուի բալոր Հայ ժողովուրդին կողմէն , առանց յարւանուանական խարանքի , և այդ ողինի խանգամաները քովրավի կուզան եղբայրութեան ըզդացումը պայծառ զիտակցութեան մը վերած ելու համար , որուն այնքան պէտք ունինք հիմայ թէ մեր փոքրիկ Հայտառանի և թէ զաղութներու մէջ :